

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ս. ՊԱՏՐԻԱՐԻՆ ԵՄԻՍԿԱԶԱԿԱՆ ՃԱՌԸ

Այս հինգերորդ անգամ պատիւ ունիմ բա-
նալ Ազգային ժողովս անձամբ շատ տկար՝ բայց
հոգեւոր լին յուսով Անցեալ տարւոյն՝ այն
արիւնհեղութեանց և սոսկման տարւոյն սկիզբը
կը վարանէինք թէ արդեօք պիտի գտնայինք
այն հանգիստը, զոր կը մտղծէինք ունենալ
յետ անցանելոյ ընդ հոգի և ընդ ջուր։ Գո-
հաւթիւն Աստուծոյ, պիտի կարող ըլլամք
ըսել այժմ թէ անցաք մեզ ընդ հոգի և ընդ
ջուր՝ հանցէ ըզմեզ Տէր Աստուած ի հանգիստ։
Ցարւոյն մէջ անցած վշտալի դէպքերը յի-
շել հարկ չէ, սակայն ճշմարտութեան և
շնորհակալեաց պարտք մ'ունիմ կատարել
թէ ձեզ և թէ բոլոր ժողովոց և խորհրդոց
նկատմամբ՝ որ ձեր ազգասիրական պարտքը
կատարելու գիտակցութիւնն ունեցաք։ Ժո-
ղովներն ու խորհուրդներն այս խիստ դժար
տարւոյն մէջ՝ իրենց նիստերը կազմեցին և
գործեցին, բայց յիշեն՝ որ քանի ամիսներ
Պատրիարքարանէն բացակայ գտնուեցայ, այլ
ոչ անգործ, ձեզ յայտնի պատճառաւ։ Եւ
եւր ցարդ բացակայ, և ինչպէս այսուհետեւ ալ
այնպէս լինելու արտօնութիւնը կը խնդրեմ
ի ձեզնի, անձինս տկարութեան պատճառաւ։
Այս բացակայութեան միջոցին՝ պատուական
Խառն ժողովոյ և իմ որոշմամբ գեր. Մխի-
թարեան Խորհն եպիսկոպոսը խորհրդական
կարգեցինք, որ ուշի ուշով և հաւատարմու-
թեամբ իւր պաշտօնը կատարեց և կը կատարե
ցարդ, և եթէ ձեր հաւանութիւնն ու հա-
ճութիւնն ստանայ, այսուհետեւ ալ պիտի
կատարէ ոչ միայն խորհրդականի՝ այլ
տեղապահի պաշտօնը, զի իր կարողութեան
փորձը ցուցուց արդէն։ Կը յիշեք որ անցեալ
Նոյեմբեր 25-ին յատուկ գրով մը հրաժա-
րական տուի ձեր պատակաւ ժողովոյն,
թերեւս տասներորդն այն հրաժարականաց,
որոց իններորդը գրով Բ. Դրան մատուցի նոյն
Նոյեմբերի սկիզբները բերնով ի Բ. Դրանէ
և գրով պատկառելի ժողովէջ հրաման խնդ-
րելով օգտփոխութեան համար գնալ այլուր,
բայց չը յաջողեցայ... ուստի պարտաւորեալ
եմ նոյնը դարձեալ թախանձանք խնդրել
այսօր։ Այս հրաժեշտներն որչափ որ այլ
ընդ այլով մեկնուին, և մինչև իսկ ծաղրուին,
հոգ չէ, զի եթէ մարդիկ չուզեն գիտնալ,
Աստուած գիտէ որ ոչ պատասխանատուու-
թենէ և ոչ գործելի փախչելու համար է. ես
ձեռքս սրտիս վրայ դրած՝ վստահութեամբ
կարող եմ ըսել թէ Պատրիարք չընտրուած
ալ կաշխատէի և աշխատեի եմ ազգիս
համար, և ցընչ յետին դարձեալ պիտի
աշխատեմ առանց ակնկալութեան առ ի մարդ-
կանէ, բայց այս պաշտօնն այնչափ մանրա-
մասնութիւններ ունի, որոցմէ ազատիլ կա-
րելի չէ՝ օգնականներ ունենալով հանդերձ։
Ազգին կենսական խնդիրը՝ որ է դաստիա-
րակութիւնը, իւր վեճակին մէջ կը մնայ
միշտ, զի ժամանակ չը կայ անով զբաղելու,
մինչև իսկ առողջութիւնն ալ եղած ըլլայ։
Ուստի մէկ կողմանէ շինել և միւս կող-
մանէ շինուածին աւերակները տեսնել՝ այս
անտանելի և յոյժ ցաւալի է ինձ։ Կրթու-
թիւնը տարածել, դպրոցներ՝ բայց աղէկ
դպրոցներ շինել, այս է մեր ամենէն նու-
րական պարտքը. սո է խորիս փրկու-
թեան ամենայն ժողովուրդոց։ Եւ հիմա՝ մա-
նաւանդ հիմա՝ Տեառն պատուականք՝ որ մեր
ամեն շարժումները ու գործերն ի տիեզերս
համայն կը հաշակուին, և հիմա՝ որ աշխարհի
ամեն կողմ չայոց ազգին ընդունակութիւն-
ները կը զրուատին, և հիմա՝ որ ալ մոռ-
ցուած չենք, ահ, այն անհանգուրժելի և
սոսկալի մոռացումը վերջացաւ, և հիմա՝ որ
չայ եւք ըսելու սկսան չամչնալ անոնք որ

կ'ամչնային երբեմն... գուցէ մեր մեղացը
համար, հիմա որչափ ջանք, որչափ աշխա-
տութիւն պէտք է այն հաշակուլ ընդունա-
կութիւնները մշակելու, լոյս տարածելու, և
այս բանին համար ամեն միջոց ձեռք առնելու։
Ուրեմն, հեռի հեռի ծուլութիւնն, անտար-
բերութիւնն ի մէջ և ամեն հայերէ, հեռի
պառակտմունք ոչինչ բաներու համար, հեռի
շնորհ տղայական և դատապարտելի կիրքեր,
հեռի անգութ և չարանախանձ քննադատու-
թիւնը գերեցաւ և բծախնդրութիւնը։ Հեռի
ստեղծութիւնը, անհաշտելի թշնամութիւնը,
պախարակութիւնը, հեռի սուտ գեղեցիկում
կուսակցութեանց և ջանք պատրելու և խա-
բելու զմիամիտս։ Հեռի զշարութիւնը, ամեն
ատեն, մանաւանդ հոգի առնելու տալու ժամա-
նակներու մէջ։ Հեռի գձուձ փոքրագութիւն և
չարակամութիւն, հեռի ի մէջ նաև չափա-
զանց կարեւորութիւն տալերն մեր անձանց
որ և իցէ գործի համար, այլ ընդհակառակն
պէտք է ունենամք անխարդախ և ճշմարիտ
և ոչ չարեալ սեր միմեանց վրայ, չըբաշա-
խցուցիւն, լուրջ խորհուրդ, անբախտելի
միութիւն։ Զանգի անցեալը կը ցուցնէ՝ որ
մենք Անիներ, ծաղկեալ քաղաքներ և հօգ
թաղաւորութիւններ ունեցած ենք, և այս
անիծապարտ կիրքերով կործանած ենք։ Այո,
մենք կործանած ենք, ընդ միշտ՝ վերականգն-
ման համար զերար գործելու անկարող ընելով՝
չարակամութեամբ, քսութեամբ։ ' լալժնից
լայն ասպարէզը միայն բացած եմք մեր առջև
անարգել. և ահա ամեն բան կորուսած և
իրաւամբ լալժնութիւնը ժառանգած ենք,
և այն ժամանակէն ի վեր է՝ որ պարծանօք
իրարու կը ցուցնեմք թէ ո՛վ քան զո՛ւ աւելի
աղէկ կ'ողջայ և կուլայ...։

Պէտք է ուրեմն ի բնց քեցենք նախանձը,
չարակամութիւնը և դատապարտելի ետեւութիւ-
նը։ Ազգասիրին և ազգասիրաց շուրջը բոլո-
րեւով՝ ոչ թէ խոչընդոտն և խափանարար և
զանազան ճարտարամիտ և չարահայտ մեքե-
նայութեամբ անոնց գործն հիմն ի վեր տապա-
լելու, զոր կընենք շատ անգամ, և գիտե՛ք ինչ
նպատակաւ, անխից ծնունդ ծաղը մը, հեզ-
նութեան նիւթ մը, անիծեալ յաղթանակ մը
կորցնելու վստակելու համար, զանի կամ գա-
նանք անկարողութեան դատապարտելով։ Ահ,
ոչ, ալ այսուհետեւ պէտք է բոլորինք ազգը
սիրողներուն շուրջը՝ օգնելու համար նոցա։
Ամեն մարդ պէտք է ինքզինք մոռնայ և
ազգը մտածէ այսուհետեւ. գործող ձեռաց
նեցուկ ըլլանք. մտածող մտաց՝ ազատու-
թեան և յառաջդիմութեան ազատ ասպա-
րէզ բանանք։ Մեք եկեղեցականքս նախ
յառաջդիմութիւնը չարքիւնք ոչ յանուն
Վրոն և Աւետարանի, որ ծնողն է յառա-
ջդիմութեան, և որով նախ մեր կրօնը
հեռի կը պահենք այսպէս կատականաց լինելէ,
և աշխարհի ալ կը ցուցնենք թէ՛ ամեն
աղէկ բան, ամեն քաղաքակրթութիւն և լու-
սաւորութիւն զլստովն ճառաբայութիւն է անու-
րանալի Բեթլեհեմի այրին մէջ կէս գիշերին
ցողով Աստուածային լուսոյն։ Այո, նախ մեք
եկեղեցականքս օրինակ հանդիսանալով հան-
դարտութեան, միաբանութիւնը սուրբ և աս-
տուածային սիրոյ եղբայրութեան, ներդաւ-
տութեան, անխնայարութեան, արթնութեան,
ճշմարտասիրութեան, անշահակցութեան,
համբերութեան, վերջապէս քրիստոնէական
և ազգային առաքինութեանց, և միշտ իրեւ
լուսաւոր սին ընթանալով ազգին առջե-
ւէն, ոչ մեր անձանց այլ ազգին համար
վառուելով լոյս տալու ատեն։ Այո, դժուար
կացութեան մէջ եղող ժողովուրդի մը դժուար
րապաշտօն առաջնորդներն ենք մեք. ուր կ'եր-
թայ ժողովուրդն՝ երբ մեք զմեզ զահալե-
թութեանց մասնեմք։ Առաջնորդին ամենէն
մեծ քաջութիւնը՝ կիրքը և ինքզինք զսպելուն
մէջ է. ամեն բան ըսել, ամեն բան քարը
տեղը դնել՝ կուռնդներու գործն է, հպապ ո՛վ

է հրեշտակն խաղաղութեան... զայս կը քա-
ղեմ ես սուրբ Աւետարանէն. զոր ունիցի
ականջս լսելոյ լուիցէ. մի՛ յաղթի ի չարէն,
այլ յաղթեան բարեան չարին...։
Եկեղեցական և աշխարհական ամենքս ալ
մի և նոյն նաւակին մէջն ենք. փոթորիկները
պակաս չեն, ծոցն ահեղամուռն կը տատանի.
գժտիւնք, նաւակը կ'ընկղմենք։ Հապա ի՞նչ
պէտք է ընենք։ Ձեռք ձեռքի տանք իրարու
տկարութեանց օգնելով։ Ոչ ոք է կատարեալ
և անսխալ բաց ի յԱստուծոյ. ո՛վ որ զայս
այսպէս չը հաւատար՝ դատապարտեալ է իւր
խղճէն։ Միայն մէկ բան մը կայ, որ ներո-
ղութիւնը, հաշտութիւնը և միութիւնը կը
դիւրացնէ. և փոխադարձ վստահութեան և
անով գործելու արիւթեան կ'առաջնորդէ
զմեզ, այն է սէրը։ Սեր սէր կայ, գոռոզու-
թիւն, ամբարտաւանութիւն չը կայ. երբ
սէր կայ, յառաջդիմութիւն կայ. շատերը
կը կարծեն թէ վարդապետը սէր կը քա-
ղեցէ, բայց այն մեռելութիւն է, անկեն-
դանութիւն է, խափանարար է յառաջա-
դիմութեան. սխալ է այս։ Սէրը՝ վեճաբա-
նութիւնը վեճաբանութիւն կը թողու, և անոր
ծնունդը այսինքն յառաջդիմութիւնն ու
բարեաւանքը կը դիւրացնէ։ Իսկ անսիրե-
լութիւնը՝ վեճաբանութիւնը թունաւորելով՝
ետեւութեան ու ամբարտաւանութեան և սոսկալի
կամակորութեան կը տանի։ Ճշմարտութիւնն
է այս։ Սերը սէր և եղբայրակցութիւն պէտք
է. սիրով և ներողութեամբ պէտք է հասկա-
ցնենք իրարու թէ՛ ամենքս ալ ուսանելու
կարօտ մարդիկ ենք, և մինչև իսկ մեր մէ-
ջէն անոնց՝ որ ամեն բան ուսած կը համա-
րին և կը յամառին, պէտք է հասկցնենք
սիրով թէ տակաւին շատ բան ունին ուսնելու.
Իսկ եթէ հակառակողին դիրքը բռնենք, սիրոյ
հակառակ դիրքը, զայն ուսանելի շատ հեռու
կը պահենք, քանզի փոխանակ՝ զայս միայն
գիտեմ զի ոչինչ գիտեմ, զուրեք տալու, իս
գիտեմ դու չը գիտես պատասխանը մշտն-
ջնաւորապէս պիտի քաղեմք նորա բերնէն և
զրչէն և երբ նորա միութենէն բարիք կը
յուսայիր, նորա հակառակութենէն չարիք
պիտի հնձես։

Փոխանակ կուռնելոյ և մեքառելոյ պէտք է
ունիլ և ուսուցանել, քահանայն, վարդա-
պետը, եպիսկոպոսը, պատրիարքը, կաթողի-
կոսը պէտք է ուսանի և ուսուցանէ այլոց։
Լրագրապետն՝ այս հասարակութեան մէջ
վառուած բացօթեայ ջահը՝ պէտք է ուսանի
և ուսուցանէ. վարժապետն՝ այս երկրային
նախախնամութիւնը պէտք է ուսանի և ու-
սուցանէ. երեսփոխանը, ժողովականը, ծը-
նողը, արհեստաւորը վերջապէս ամեն կար-
գի մարդիկ ուսանին։ Ուսանիլ, ուսանիլ խո-
նարհութեամբ, միութեամբ և սիրով և ոչ
յանձնապատասխանութեամբ, այս է յառաջա-
դիմութիւնը։ Կաշխատինք արդեօք այս բա-
նին համար։ Իրաւ շատ դպրոցներ ունինք
և կաշխատինք, ոչ ոք կարող է ուրանալ,
բայց այս սկիզբն է աշխատութեանց։ Պէտք
է յարատեւենք, զի յառաջդիմութիւնը սահ-
ման չունի առնելու։ Մեր դպրոցները քիչ են,
անբաւական են, աշխատինք շատցնելու, ա-
մենքս ալ աշխատինք։ Կը յուսամ որ այսօր
հանդիսաւոր ուխտ կընէք այս բանին, կը յու-
սամ որ արդէն ունեցած դպրոցներ ծաղկեց-
նելու փոյթ կը տանինք, կը յուսամ որ նու-
պար՝ Եւրոպական վարժարանն որ այն
չափ պտուղ արտադրեց, և որոցմէ այսօր
50—60 դաստիարակ հայաստանի մէջ և այ-
լուր վարժապետութիւն կընեն, և երեք հա-
րիւրի չափ աշակերտք ալ զանազան պա-
տուաւոր դրից մէջ են. այո, կը յուսամ որ
ընկերութիւն մը կը կազմէք և կը բանաք
այն լուսաւորութեան տաճարը, արդիւնք
շատ քրտանց և ջանից, և որ ժամանակիս
պարագաներէն փակեցաւ. կը յուսամ որ ըն-
կերութիւն մը կը կազմէք և Կեդրո վարժա-

րանն ալ իւր նպատակին յարմար դիրքի կը
վերածէք փութով. կը յուսամ նաև որ
Քարակէօղեան ագնիւ եղբարք իրենց գրով և
բերանացի ըրած խոստումն, որ էր վաճա-
ռականական դպրոց մը հիմնել, այսուհետեւ
կը բարեհաճին կատարել, զի ողորմութեամբ
Աստուծոյ ահա անցաւ պատերազմը. կը յու-
սամ որ մեր ազգային լուսամիտ փառաբանք,
որ պարծանք եղան մեզ, կը փութան պա-
տասխանել իմ երկու և երեք նամակներուս,
զորս անցեալ տարուին է ի վեր ուղղեցի, և
Մուրատեան վարժարանի մէջ մեր ազգին ունե-
ցած իրաւունքը պահանջելու օրինական ճամ-
բան վերջապէս ցուցունել կը բարեհաճին։
Կը յուսամ նաև որ ազգային լուսաւորու-
թեան այն միւս համբաւեալ վառարանին՝
այն է Երուսաղեմայ դպրոցին և վստաւ յա-
ռաջդիմութեան համար՝ յԱղէքանդաբի
գրած նամակիս պատասխանը կը շնորհաւի
վերջապէս գործենք և յուսանք։ Բայց գոր-
ծողն ու սերմնողը՝ միայն հիմնու և քաղե-
լու յոյս կուենայ. պէտք է ընկրկիլ գժուա-
րութեանց առջև։ Ի՞նչ գժուարութիւններ
արգելքներ որ երեն, ժամանակն որչափ ձա-
խորդ և մեր վեճակն որքան գառն լինի,
պարտքերնիս պարտք է, գործելու ենք։ Նա-
խատինք, Թուրքումուր, բռնութիւն, արհա-
ւիրք թող տեղան՝ որչափ կամին, մեք քը-
տերնիս և աչքերնիս յԱստուած ուղղեալ՝ կը
աղաղակենք, և իրաւունք ունինք լուսաւոր
անոր անհոն ողորմութեանը վրա, զի մեր
չայրն է նա պահպանող միւսին, աչք ծա-
ւայի ի ձեռս տեսան իւրոյ, նոյնպէս աչք ա-
ղախնոյ ի ձեռս տիկնոջ իւրոյ. այնպէս են
աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր մինչև
ողորմեսցիս ի վերայ մեր։ Ողորմեաց մեզ Տէր,
ողորմեաց մեզ, զի բազում լցաք տառապա-
նօքս։

Պէտք է գործենք և յուսամք ասելով միշտ.
«Եկեցի լոյս Տեառն»։ Աստուծոյ ի վերայ մեր
Զգործս ձեռաց մերոց ուղիղ արան ի մեզ Տէր
և զգործս ձեռաց մերոց յաջողեալ մեզս։

(Աբր. Աբ.)

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԷՆՆԱ, 14/26 օգոստոսի։ Անկասկած
է, որ ուսանելը Չատայի ամրոցները կը
մաքեն Բաթումը իրանց յանձնելուց յետոյ
Գլխաւոր հրամանատար գեներալ Տոպիբեկի
գլխաւոր բանակը երեւի Վարնա կը տեղա-
փոխվի։ Դոնդուկով-Կորսակով և Իշխան Լօ-
բանով-Բոստոփալի զբաղված են բոգոպեան
պատմութեան մասին մի հաշիւ կազմե-
լով, որ պէտք է ընդդիմադրվի բոգոպեան
միջազգային մասնագործի մական՝ հաշիւն։
ՎԻԷՆՆԱ, 15/27 օգոստոսի։ Սերանիօ քա-
ղաքի համար համայնքի ներկայացուցչու-
թեան կանոն է նախագծված, որի անդամ-
ները լինելու են վեց յունադաւաններ, հինգ
մահմետականներ, չորս հրեաներ և երեք
կաթօլիկներ։ Քաղաքապետ կը լինի Մուստա-
ֆա բէյ։ Անկարգութիւններին ձեռնարկող
վտանգաւոր Հաջի-Լայա բռնված է։
ՎԻԷՆՆԱ, 15/27 օգոստոսի։ ԲՍԼԻՏ. Ուր-
թոսք. լուրերը հաղորդում է, որ Սերբիոյի
միլիտարութիւնը հրաժարական ներկայաց-
րեց, որ իշխան Միլան ընդունեց։ Նոր միլիտ-
արութեան կազմը յանձնված է Բիստրիչնո
Աւստրիայի և Խալապոյի դիպլոմատական
գործակալները նշանակված են դեսպաններ
Սերբիայի մէջ։ Ծովիլի նշանակված է սերբիա-
կան դեսպան Վիկենայուով։
Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 16 օգոստոսի։ Միլիտար
Տիմաշով նորից սկսեց վարել իր պաշտօնը։

